



Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻԻ ՓԱ. — ՇՐՋԱՆ ՓԵ.

1882

ՏԱՐԻ ՓԵ. ՆՈՅԵՄ. 30.

ՅԱԻԻՏԵՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՄԱՍԻՆ ԱԿՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ:

Հօրը հօր գնալը.

Խաղաղութիւն հմ թագում ձեզ, իմ խաղաղութիւնս հմ ապիս ձեզ. չէ թէ ինչպէս աշխարհքս է տալիս՝ ես տալիս հմ ձեզ. ձեր սրտերը թող չշփոթուին ու չվախենան:

Լսեցիր, որ ասացի ես ձեզ, թէ զնուժեմ ու էլ կղամ ձեզ մօտ. թէ որ ինձ սիրէիք, ապա ուրախ կլինէիք, որ ես Հօր մօտն հմ զնուժ. ինչի որ իմ Հայրս ինձանից մե՛ծ է:

Շատ չուզեցնալով է միայն միտք անում մարդս, որ մի օր պէտք է մեռնի ու Հօղը մանի. բայց ինչքան բան կայ, որ նորան միտք է անել տալիս կամայ ահամայ, որ պէտք է մեռնի ու տանեն, թաղեն իրան, աշխարհիս երեսումը չպիտի այլ եւս երեւի, Հօղի տակումը պէտք է գնայ, սլառկի: Թէ՛ այն ժամանակ, որ մարդս պատահումէ մարդոց, որ մեռելի Հետ գնումեն ու տանում մինչեւ գերեզմանը ճանապարհ ձգելու, կամ թէ՛ այն ժամանակն, որ լսումէ թէ՛ այս, այն իրան ճանանչ մարդը վախճանուել է, կամ երբ որ միտքն են ընկնում իւր իսկ սրտի սիրեկաններն, որ իրանից բաժանուեցին, գնացին, Հեռացան ու Հօղը մօտն — այս

ամեն մի դիպուածումն միտք ենք անում, որ մեր եւս բնութեան օրէնքից դուրս գալու չենք, մեզ համար եւս նոյն օրէնքը կայ, ու մի օր մեր եւս պէտք է հրաժարուենք աշխարհից, բաժանուենք մեր սիրեկաններից, հեռանանք, օտարանանք մեր տունից՝ տեղից, ազգ ու ազգականից, բարեկամից ու ծանօթներից: Այն մարդն, որ ոչ մի ժամանակ չէ մտածել, սարսափելով, իւր մահուան ժամի վերայ, նորա նման է ու նորա օրին հասած է, ով որ մահ էր ցանկանում ինքն իրան: Բայց առհասարակ քիչ մարդ կայ, որ ուղենալով մտածի թէ՛ մի օր պէտք է ինքն եւս մեռնի ու հողը մանի. այդ բանը մտքին բերելը հասարակ մարդն, աշխարքիս մարդն ամենեւին չէ ուղում, այլ ամենայն կերպով աշխատումէ, որ իւր զլխից հանի, կամ իրանից հեռացնի, որ սիրտը չտխրի, կեանքը չդառնացնի, աշխարհքը աչքիցը չընկնի: Մարդիս այսպէս լինելը բնական է ու չպիտի զարմացնի մեզ: Եթէ որ մահկանացու մարդի մէջն այնչափ սաստիկ եւս չլինէր ընդածին (մեզ հետ ծնած) կեանքի սէրն, որչափ որ է խկապէս, զարձեալ միջի պիտի չխորշէինք, հեռու չփախչէինք մեռնելու վերայ միտքեր անելուց, ինչի որ այդ մտքերն բոլորովին հակառակն են այն ամէն բաներին, ինչ որ այս աշխարհում մեզ ուրախութիւն է բերում: Մահը մեր յոյսերին վերջ է դնում, մեր ամեն յոյսերը կտրումէ. մեր մտքումը դրած ամենագեղեցիկ բաները ոչնչացնում, մեր ունեցած ու մեզ համար ամենաքաղցր սովորութիւններից բոլորովին յետ քցում, մեր ձեռքից առնում, տանում մեր ծնողներին, մեր զաւակներին, մեր եղբայրներին, քոյրերին, ընկերներին, բարեկամներին ու մեզ նորանցից զրկում, անողորմաբար ոյժ բանեցնելով: Այն, մեր հոգու կտոր, մեր սրտին թանկագին մեր սիրեկաններից քանի քանիսին կեանքից զրկել է անգութ մահն ու մեզ սեւ սրտով նստացրել:

Երբ սր բանն այսպէս է, այլ եւս ինչի՞ համար ամեն անգամ նոր նորից սեւացնենք մեր սիրտը տխուր բաներ միտքներս բերելով ու դառնացնենք այն քիչ մեր քաղցր օրերն, որ մեր կեանքի մէջը մեզ ուրախ անցկացնելու համար են մնում: Քանի որ լաւ օրեր ունենք տեսնելու, քանի որ մեր ձեռքն են այդ լաւ օրերն, խելք կանենք, որ վայելենք, վայելչութիւններ քաշենք. խել եթէ զուր հոգսեր անելով, մեր ունեցած ուրախ օրերն եւս ինքներս տխրութիւնով անցկացնենք, այն եւս մեր խելքիցն իմանանք:—

Նառերի բերանից այս խօսքերը կլսես, եթէ որ նորանցից հարցանել ու բան խմանալ ուղենաս իրանց կեանքի մասին, թէ ինչպէս պէտքէ անցկացնեն, կամ թէ ինչպէս պէտք է ապրի մարդս, քանի որ կենդանի է: Այլ եւս ի՞նչ ասեմ. շատ մարդ կայ, որ մինչեւ անգամ քրիստոնէական հաւատին եւս լաւ տեսէ չեն ուղում. նորանց խելքովը՝ մարդիս սրտին տրամութիւն բերող մի հաւատ է, որովհետեւ միշտ մեզ ասումէ թէ՛ մեր կեանքն ու աշխարհս անցաւօր է, այսօր կանք, վաղը՝ չկանք:

Բայց ճշմարիտն այն է թէ, ով որ մահուան վերայ հանգիստ եւ ուրախ սրտով մտածել չէ կարող, նա ոչ մի ժամանակ դեռ եւս չէ մտածել իւր կեանքի վերայ: Աւժ համար որ մահը չուղենալու, չախորժելու մի բան է, մի զզուելի սլաակերի նման, այնպիսի մարդի համար կեանքն եւս մի կնճռոտ, խելք չհասցնելու մի հանելուկ է. եւ այդպիսի մարդն ինքն իրան եւս դեռ չէ հասկացել, դեռ եւս ինքն իւր խելքին տեղ չէ արել թէ՛ ինչի համար է աշխարհք ծնել ու ապրում եւ ինչ բանի ետեւից պիտի ընկնի լինի, որ հասնի. հաւատն է, որ կեանքի հանելուկն հանումէ եւ նորանով մեր ձեռքն է տալի մահուան հանելուկի բանալին. հաւատովն է, որ մեր հասկանումներ թէ, ինչի համար ենք ապրում ու ինչի ենք մեռնում, կամ թէ մեր կեանքն ու մահն ինչ է, ինչ խորհուրդ ունի մեր՝ մի օր ծնելը, մի օր եւս մեռնելը, որ քրիստոնէական հաւատ չունեցողի համար շատ մութ ու անհասկանալի բան է երեւում ու մնում, ինչքան եւս գլուխ կտրի, մրտածելով: Ըշմարիտ քրիստոնէական հաւատը՝ ոչ միայն մարդիս սրտին տխրութիւն բերող չէ, այլ ընդհակառակն՝ մահուան վերայ մտածելու ժամանակին՝ ամեն մի ցաւ թեթեւացնող է, մարդիս սիրտն բարձր պահող ամեն մի նեղութիւնից, երկիւղից, չարից, փորձանքից. այդ մեր հաւատովն է, որ կարողանում ենք կեանքի տեսակ տեսակ ուրախութիւններն վայելել միշտ հանգիստ սրտով, թէ՛ մեր մահը շուտ գալու լինի, թէ՛ ուշ. որովհետեւ մեզ համար մէկ է՝ շուտ կմեռնենք թէ շատ երկար ապրելուց յետոյ, ինչի որ մեր անցկացրած տարիներն մեր աչքին չեն երեւում, ու նշանակութիւն կարող են ունենալ մեզ համար այն ժամանակ, երբ որ քրիստոնէական կեանքով ու գործով ենք անցկացրել: Եթէ որ Քրիստոսի հաւատն իրօք վայելել է տալի մեզ միշտ հանգիստ սրտով կեանքի տեսակ տեսակ ուրախութիւններ:

բրն, թէ շատ ապրելու լինենք՝ թէ քիչ, եթէ մեր սիրտը բարձր է պահում՝ աշխարհումս մեր գլխին գալու ամեն նեղութիւններէ, եթէ մեր ցաւերը թեթեւացնումէ. ուրեմն ի՞նչպէս կարող ենք այդպիսի հաւատին վատ ասել, կամ ինչի՞ մեր գլխից պիտի քշենք, հեռացնենք այն մտքերը, որ իրանք իրանց գալիս են մեր գլուխը մանում: Քո սրտիդ մօտիկներից ումի՞ն ես արդեօք կատարելոց կարգումն համարում: Կարելի է հօրդ, որ քեզ համար երկրաւոր պահապան հրեշտակդ էր, քանի որ ողջ էր. թէ մօրդ, որ քեզ իւր աչքի լուսի պէս էր սիրում: Կարելի է եղբօրդ, որից հազար ու մի լաւ լաւ յոյսեր կար, երբ որ քո աչքիդ առաջին էր, քո հետդ ման էր գալի: Եւ ասեմ՝ քեզ մի՞ թէ սրտիդ սիրեկանի մինին միտքդ բերելդ այլ եւս այնքան չես ուզում, որ մինի մահը, որ միտքդ է ընկնում, մենակ եղած ժամերումդ, մահից վախենումես:

Մեծ կորուստ ունեցած ժամանակդ՝ սրտիցդ արիւն է գնացել, դեռ եւս սրտիդ խոցը չէ լաւանում: Ա՛խ, այնպիսի խոցեր կան, որ մարդիս բոլոր կեանքին մէջ եւս այնպէս են մնում՝ առանց լաւանալու: Ախալ խօսք է թէ՛ ժամանակը վերջը վերջը ամեն բան բժշկումէ: Բայց ինչ որ ժամանակը չէ կարող անել, ինչ վերք, ինչ խոց, որ ժամանակը չէ կարող անում բժշկել, Քրիստոսի մեղ պարգեւած հաւատը լաւ գիտէ իւր սուրբ բալասանովն նորա ցաւը թեթեւացնել, մեղմացնել, այն՝ ամեն ցաւի ճար՝ իւր բալասանովն, որ կաթեցնումէ մեր վերքի, մեր խոցերի վերայ:

Շատ կարելի է, որ մի հանդարտ բոպէումդ քո մահդ ու ոչնչանալդ միտքդ ընկնելով, ահամայ մի սարսափ է գալի վրադ ու բոլոր մարմնովդ դողում, զարհուրումես, մաղերդ բիզ բիզ կանգնում ու մարմնիդ բո որ թելերին ընդդէմ է թլում ու հակառակ են ուղում կանգնել մեր սիրտն ահ ու դող ձգող այն մտքին, որ մի օր պէտք է ոչնչանանք: Մի մի ժամանակ միտք կանես —, ի՞նչպէս չէ —, որ աւելի լաւ կլինէր ամենեւին աշխարհք ծնած չլինելի, քան թէ մի օր ծնել ես, մի օր եւս պիտի մեռնես. բայց այս անախորժ, այս՝ սիրտ սեւացնող զգացումներից պարզ կերպով հասկացած ճշմարտութեան ներգործութիւններ չեն ամենեւին, այլ մի սխալ հասկացողութեան պտուղ: Եսկ քրիստոնէական հաւատն է, որ այս տեղ մահուան ամէն զարհուրանքներն ոչնչացնումէ մեր առաջին՝ ու մեր աչքը ձգել է տալի այն պիտի

ապագայի, յորում կեանքը, գործունեությունը եւ ուրախութիւնը յաւիտեան վերջ չունին: Աշխարհիս ու կեանքի խորհուրդըն ու ամենայն հանգամանքները ամենալուսաւոր կերպով մեր առաջը դնող Փրկիչն միթէ զուր եկաւ աշխարհ, որ մեզ այն գերագոյն եւ անդորրացուցիչ մտիթարութիւնը բերեց՝ թէ մեր անմահ ենք: յաւիտեանական ու երջանիկ կեանք ունենալու համար ենք ստեղծուած:

Խնչպէս նկարագրեց Քրիստոս մահը. մահը, որոյ արհաւիրքը (ղարհուրանքները) ինքն այնպիսի սարսափելի կերպով քաշեց, որ ոչ մի մահկանացու մարդ չէ քաշել. բայց եւ այնպէս պէտք էր քաշէր՝ այն եւս՝ երբ որ գեռ եւս բոլորովին առոյգ հասակի մեջըն էր, գեռ եւս իւր ամենալաւ տարիքի մեջն, բոլորովին առողջ եւ ոյժը ամենեւին չկորցրած միջոցին, որ տեսնողին հիացնուէր, եւ որ, շատ լաւ գիտէր իւր անտրատ կեանքն ու անմեղութիւնն, որ ունէր. ինչ էր ասում՝ Նա մահուան մասին, թէ ի՞նչ է. ասումէր թէ՝ *ἄνευ νότου*. ահա ինչ է մահն ամեն մի մարդի համար, ով որ մեր Փրկչի ճշմարիտ աշակերտն է ու Նորա մեզ սորվեցրածի գոնէ այս խօսքը հասկանումէ:

Ինչպէս որ Նա էր ասում, այնպէս եւս ամեն մի քրիստոնեայ ասումէ իրաւամբ թէ, մեռնելը՝ Հօրը մօտ յետ դառնալ է. ինչի որ Յիսուսի Հայրը մեր հայրն եւս է, ամենայն բան Ստեղծողն՝ իմ Ստեղծողս եւս է: Ինչ քաղցր գաղափար է, որ ունենք մահուան վերայ. մեռնելը հասկանումենք Հօրը մօտը գնալ: Միշտ այս անունը պիտի ապրինք մեր եւ մեր ընկերաց, բարեկամաց ու սիրելիների մահուանն. այն ժամանակն մահը, որ մեր վախեցած երեւակայութիւնը իբր կմախք (ոսկորտանք) դառնալ է իմանում սովորաբար, մահն ասումով, այն ժամանակը կնամակէր մի սիրելի ոգու, որ իբրեւ քաղցր բարեկամ մեզ մեր կեանքի սահմաններից դուրս է հանում, որ մեզ գէպ ի մեր հայրենիքը տանի: Եւ ճշմարիտ է որ, մահից վախենալը նորանիցն է, որ սրկալ ու զարհուրելի անուններ ենք տալի մեր մահուանն, որ մեր եւս այնպէս ենք իմացելու այնպէս ընդունել: Նրբեմն մահ, մեռնել ասելով փառել, փշանալ են հասկանում. բայց մեր հոգին չէ փառում, չէ փշանում՝ երբէք. երբեմն՝ աշխարհս թողնել, աշխարհիցս դուրս գալ են իմանում. բայց մեր տիեզերքից երբէք դուրս չենք գալիս. պատճառ որ այդ բանն անկարելի է. երբեմն

ոչնչանալ են հասկանում. բայց երբէք կարելի չէ մեր ոչնչանալը: Զէ՛. մեռնելը՝ Զօրը Կօր էրթալն է:

Գերեզմանի մէջ պառկած դիակի վիճակն ու դրութիւնը՝ մեր գրութիւնը չէ, ինչպէս որ կանք մեր ողջ ժամանակին. մեռած, գերեզման մտած մարդի դրութիւնն՝ իւր պատեանը թողած, իւր հոգու հագուստը հանած գրութիւնն է: Երբ որ մեք մկրատով մեր մաղերը խուզում, կարծացնում ենք, այն կարուած մաղերը դարձեալ մեր գլխի վերայ են ու այնպէս ենք համարում, որ իւր թէ չե՞ն կտրուել, արդէն դէն ձգուած չե՞ն իրրեւ մեզ այնուհետեւ անպէտք բան: Զինուորը որ պատերազմի մէջ ձեռը, կամ ոտը կորցնումէ, ու ինքն աչքովը տեսնումէ, որ թաղեցին. այն կտրուած անդամներն՝ դրութեան մէջն է լինում եւ ինքն. այդ անդամները հողի տակ փտում են իրրեւ կեանք ու կենդանութիւն չունեցող, իրրեւ մեռած անդամներ, իսկ ինքն ողջ է, կեանք կայ մէջն ու ապրում է եւ զգում է, որ փախու ընդունակ չէ եւ չէ կարող փախել:

Ինչներին է պէտք մեր մարմնաւոր պատեանն. ի՞նչ ենք աւնում նորան. մի հնացած, մի դէն քցելու հագուստ է դարձած մեր հոգու համար: Ինչո՞ւ գող չէ բռնում մեզ, որ մերմարմնոյ մասերի փոխուիլն ենք տեսնում: Այս ասումեմ՝ նորա համար, որ երեւելի բնագէտների արած դիտողութիւնն, որ կարգում ենք, նորանց գրած իցն իմանում ենք, որ տարիներ ապրելուց յետոյ՝ զանազան տարիների միջոցում՝ մարդիս մարմինը շատ անգամ փոխւում է, այնպէս որ՝ պատանեկութեան հասակին որ գալիս ենք, մի եւնոյն միսն ու արիւնն չենք ունենում, որ ունէինք մեր երեխայութեան տարիքում. նոյնպէս եւ ծերութեան հասակում՝ դարձեալ ուրիշ մարմին, միս ու արիւն ունենք, եւ այն չէ, ինչ որ ունէինք մեր այրական հասակումը: Մեք չենք զգում, չենք հասկանում թէ՛ այդ փոփոխութիւնները մեր մէջն ինչպէս են լինում, որ մեք չենք կարում իմանալ. ինչու որ այդ փոփոխութիւնն աննշմարելի կերպով կամաց կամաց է լինում: Ինչո՞ւ համար աւելի մեր աչքին պիտի երեւի, աւելի մեզ թուելի լինի վերջապէս՝ մեր վերջին փոփոխութիւնը, որ մեք մեր թանձր պատենից (կճեպից) բաժանւում ենք: Ո՞վ է, որ կարողացել է դիտել թէ՛ ինչպէս է զարթուն մարդը քունի գնում, որ ինքն եւս չէ իմանում. այժմ՝ դեռ զարթուն էր, մին եւս տեսար, արդէն քունի է գնացել. այդ

աննշմարելի փոփոխութիւնը ամեն մի մարդ իւր վերայ փորձած է ու լաւ գիտէ—: Նախ մարդիկ են պատահել, որ հոգի տալու միջոցին, խելքները բոլորովին վրաններն է եղել ու իմացել են, որ մեռնում են: Հանգիստ կերպով վախճանուողներից քիչ մարդիկ են պատահել, որ տեսնէինք թէ՛ հոգին՝ մարմնից բաժանուելու միջոցին՝ մեռնողը չուզեցալու, ընդդիմանալու նշաններ է ցոյց տուել: Մինչեւ անգամ այն մարդն, որ մեռնում է եղել քայքայուած մի մարմնի կրակի պէս այրող ցաւերից, մահը մօտեցած ու հոգին աւանդելու րոպէումը այդ ցաւերն այլ եւս նա չէ զգում եղել:

Դէն գնան, հեռանան մահուան այն ամեն անմխիթար պատկերներն, որ մեր երեւակայութեան մէջ քաշում ենք. այդ պատկերները մեր հոգւոյ դատարկ, հնացած, մաշուած, կտրատուած հագուստիցն հանելով, մեր գլխին ցաւ, մեր սրտին մաշուցք ենք շինում: Մենք անմահ ենք: Բոլոր բնութիւնն, բոլոր աշխարհս իւր մէջն եղածներովն ու նորա հետ միասին զարմանալի կերպով համաձայն եւ միակերպ վկայութիւն տուող Աստուծոյ յայտնութիւնն, որ մեք ընդունել ենք մեր Փրկչից, նոյնն են քաջողում մեզ, թէ մեք անմահ ենք: Առանց այս հաւատին, որ հաւատ ու հաւատար, եթէ ասենք, քիչ է, պատճառ որ մեր հոգւոյ ամենաներքին ու ամենագեղեցիկ մի զգացմունքն է, որ հոգւոյ օրէնքն է: առանց այս հաւատին, ասում եմ, ոչ Աստուածութիւնը Աստուածութիւն կլինէր, ոչ աշխարհքը՝ աշխարհք, ոչ բանականութիւնը՝ բանականութիւն. մեր մտածելու բոլոր կարողութիւնն ու մինչեւ անգամ մեր գոյութիւնն խելքից՝ մտքից դուրս, ոչ մի բանի չնմանող մի սխալմունք կլինէր:

Աշխարհիս ամենահին ժամանակի մարդիկը քաղաքներ շինել, զէնք հնարել, կառւ գործել գեռ եւս չորրիւմ, լաւ հասկացած էին իրանց բանականութեան վկայութիւնովն, որ մի ամենակարող, գերագոյն ու բարի Եութիւն կայ. նոյնպէս լաւ իմացած էին իրանց խելքի զօրութիւնովն, որ անմահ կեանք կայ: Գարձեալ հազարաւոր տարիներ հազարաւոր տարիների վերայ անց կէկնան մեր երկրագունդի վերայ. նորա մակերեւոյթներն (երկրիս երեսն) կփոխուին. որտեղ որ այժմ՝ անապատներ են, կարելի է, շատ հեռու տեղերի վերայ թագաւորական իշխանութիւն ու զօրութիւն բանեցնող քաղաքներ կձաղկին. իսկ որ

տեղ որ այժմ մահկանացու մարդոց ահագին շինուածքներն են բարձրանում, այնտեղերը նոցա աւերակները հազիւ ցոյց կտան, որ շէնքեր են եղել մի ժամանակ այդ տեղերը, բայց մարդիս կեանքի, գոյութեան անվերջանալի կերպով շարունակուելու կողմանէ, յաւիտենական տեւողութիւն ունենալու գիտակցութեան կողմանէ, որպէս եւ Աստուծոյ գոյութեան մասին մարդոց ունեցած գիտութեան կողմանէ՝ այնչափ քիչ փոփոխութիւն կրկնի, ինչպէս որ բնութեան որ եւիցէ օրէնքները չեն փոխվում, այն օրէնքներն եմ ասում, որով բոլոր աշխարհս իւր գոյութիւնն ունի ու շարունակվումէ անխոտոր կերպով: Եթէ երբ եւ իցէ՝ եղել են, կամ թէ այժմս եւս կան այնպիսի մարդիկ, որ կասկածել են, կամ կասկածումեն, կամ թէ՝ ուրացել են բոլորովին եւ ուրանումեն որ մարդիս հոգին անմահ է, բայց խղճմտանքը միշտ եւ հանապազ ընդդէմ է եղել նոցա խելքիցը դուրս եկած այդպիսի ունայն ու անհիմն վճռին, որ, մոլորվելով, արել են իրանց համար:

Մեր՝ միայն երկրաւոր կեանք ունենալու համար աշխարհք եկած չլինելը, այլ մեր մահից յետոյ եւս մեր կեանքի շարունակուելը ու յաւիտենական տեւողութիւն ունենալը մի քանի իմաստուններ փորձ են փորձել գատողութիւններով ու աւելի քան հաւանական խօսքերով ապացուցանելու (խալաթ անելու) այնպիսի ճշգրտութեամբ, ինչպէս որ մաթեմատիկական խնդիրներն կարելի է ապացուցանել: Բայց անմահութիւնն ապացուցանելու բան (գաղափար) չէ, այլ մեր բանական էութեան ամենաներքին կողմի երեւան գալն, բացայայտուիլն է. այս բանը, կամ գաղափարը, որ ունինք մենք, չենք կարող գիտնական (գիտութեան) ճանապարհով քննել ու իմանալ, ինչպէս որ չենք կարող ամենայն կեանքի ու կենդանութեան սկզբնական աղբւրքը քննել:

Բայց մարդիս համար — իսկը որ մտիկ տալու լինիս — իւր կեանքի յաւիտենական տեւողութիւն ունենալու ապացոյցներն ու հիմունքը գտնելն աւելի հարկաւոր եւս չէ նորա համար, որ առանց այն եւս աւելորդ է, քանի որ մեր գիտակցութիւնն իբրեւ մեր ներքին, մեր հոգոյ կարիքն է ճանաչում. այլ մեզ հարկաւորն եւ ցանկալին իմանալու այն է, որ թէ մեր կեանքի այս տեւողութիւնն ինչպէս, ինչ կերպով պիտի լինի, ինչ վիճակ պիտի ու-

նենայ մեր հոգին՝ մեր մարմնից բաժանուելուց յետոյ. մեր հոգոյ այս վիճակը որպիսի պիտի լինի ու ինչ յարաբերութիւն պիտի ունենայ այն վիճակին հետ, որ մեք յաւիտենականութիւն ենք ասում:

Մահկանացու մարդս՝ իւր անխորհուրդ (անմիտ) հետաքրքրութիւնովն շատ է ետեւից ընկնում որ եւ ինչ կերպով իմանալ, հասկանալ այն գաղտնիքը (մեղանից ծածկուած, մեր խելքը չհասնելու բանն)՝ թէ ինչ վիճակի մէջ պիտի լինի մեր հոգին այն կեանքումն, ուր կգնայ եւ ինչ կլինի մեր մեռնելուց յետոյ, եւ արդէն շատ տեսակ անհիմն բաներ գլխից հնարած է, մի օր կամ մի ժամանակ մեր ունենալու ապագայ կեանքի մասին: Բայց երբէք պիտի չմոռանանք, որ մեք՝ իբրեւ մարդիկ՝ բոլոր աշխարհս ու նորա մէջ եղածները՝ մեր շատ սահմանափակ ամենեւին հեռուները չգնացաւ, շատ սակաւ բան իմացող հինգ զգացմունքներովն ենք ճանաչում, կամ հասկանում, այն մեր հինգ զգացմունքներովը, որով մեք աշխարհիս արարածների գեռ եւս մի ստոր աստիճանումն ենք գտնւում. եւ ինչ որ մեր հոգին իւր բոլորովին նոր յարաբերութիւնների մէջը պիտի տեսնի կամ իմանայ, այդ մասին անկարելի է, որ մեք մի գաղափար ունենալ ու մեզ երեւակայել կարողանանք. ինչի որ գորա համար ինչ որ պէտք է ունենանք մեք, այն չունինք բոլորովին: Ի՞նչ պէս կարող է մի խուլ ու համր մարդ դատողութիւն անել մի երաժշտութեան, մի ներդաշնակ երգի վերայ: Արօ՞ղ է մի երեխայ, կամ մի բոլորովին տգէտ մարդ՝ մի քիչ գոնէ՝ մի վերի վերոյ կերպով ըմբռնել (հասկանալ) մի աշխարհահռչակ իմաստունի հարուստ գաղափարները: Ինչ որ յաւիտենական կեանքին է վերաբերում, այդ հասկանալու կողմանէ մեք ամենքս եւս անչափահաս ենք, քանի որ այս աշխարհիս վերայ ենք:

Աճմարմին հոգի պիտի լինինք ու յաւիտենական կեանքի մէջն ինքներս շրջենք, որ կարողանանք ուղիղ գաղափարներ ունենալ թէ՛ այն կեանքումն ինչ գրութեան են փոխւում ու ինչ ջոկ վիճակի մէջ են լինում: Քանի որ այս կեանքումն ենք, բաւական է մեզ այնչափ եւ այն իմանալ, ինչ որ մարդոց մէջ ամենից աստուածայինն Քրիստոս մեզ սորվեցրեց: Մահուան մասին փրկիչն ասաց թէ՛ Հօրը հօրը գնալ է:

Արգէն բաւական է, որ ճանաչենք թէ՛ Աստուած ամենակարող է եւ ամենազօր սէր ունի մեր վերայ, ու կզգանք, որ գորանով բոլորովին հանգստանումէ մեր սիրտը մեր ունենալու ապագայ վիճակի մասին այն կեանքումը. բայց ոչ այսչափ միայն, այլ եւ անպատմելի ուրախութիւն կզգանք մեր սրտումը, երբ որ կմտածենք մեր ապագայ վիճակի վերայ այն կեանքումը: Պատճառ որ՝ Աստուծոյ ամենազօր սէրը մեզ միշտ յայտնւումէ դեռ մեր այս աշխարհումն ապրած միջոցին, ինչպէս որ մեր կեանքումն ամեն ժամանակ տեսնւումէ. մի՞ թէ այդ սէրը պիտի կտրուէր մեզազանից, պիտի դադարեր, երբ որ մեր մարմնի մէջ դադարումէ շունչը, դադարումէ մեր արիւնը ման գալով: Ո՛չ, մեր մարմինն անշնչանալուց եւ մեր արիւնը սառելուց յետոյ եւս Աստուծոյ ամենազօր սէրը մեզանից չէ հեռանում, մեր վերայ լինելուց չէ դադարում. ինչի որ Աստուծոյ ամենակարողի ամենազօր սէր չլինիլ, եթէ որ քիչ բոլէներէից յետոյ իւր արարածից կտրուի, վերանայ, վերջանայ: Աստուած, որին ես ստիպւումեմ՝ ճանաչել մի՛ անսահման կերպով կատարեալ Լուծիւն, եւ որոյ վերայ զարմանումեմ՝ ու հիանում, նոյն ճանաչելով՝ Նորան իւր բոլոր արարածների մէջ՝ թէ՛ ամենամեծ եւ թէ՛ ամենափոքր իւր գործերումն ու ստեղծածներումն, նոյն Աստուածս ես ճանաչումեմ՝ իմ հաստատուն ու աներկմիտ հաւատովս՝ իմ յաւիտենական, սիրող, խնամող, երջանկացնող Հայրս, ինչպէս ինքն յաւիտենական է, ես եւս նորա սիրելի ստեղծուածն եմ:

Ինչ կոչման համար նա ինձ մի օր կկոչի եւ ես այն ժամանակ ինչ կլինիմ՝ ու ինձ ինչպէս կլինի — այդ ես չգիտեմ: Բայց ինչպէս որ ես Աստուծոյ ամենազօր մեծ վայելչութիւնն արգէն այս աշխարհիս վերայ եղած ժամանակս նկատումեմ՝ ու հասկանում, այնպէս եւ ներկայից ապագան ենք իմանում: Տիեզերքի մէջ Աստուծոյ կատարելութեան լրութիւնը՝ ինչպէս հայելիի մէջ՝ պարզ երեւումէ: Ժամանակաւորի մէջ կան արգէն յաւիտենականի նշաններն: Ո՛րքան որ բոլոր աշխարհիս Հօր ստեղծածները քրննումենք, ինչպէս որ երեւումեն մեզ մեր մահուանից առաջ, այնչափ աւելի նշմարանքներ են մեր առաջը գալի յաւիտենական կեանքի մասին:

Այլ որ այս աշխարհս, այս ծայր ու ճոթ չունեցող աշխարհս ճանաչումէ, կամ՝ նորա մասին տեղեկութիւն ունի, նա այս

աշխարհքիցս բաժանուելուց, հեռանալուց չի վախենալ, այս աշխարհքիցս, որ անծայր, անսահման տիեզերքի մէջ այնչափ ամենափոքրիկ բան է, ինչպէս որ արեւ ժամանակ երեւեցած շամանդազը (փռչի մի հատիկը): Աստուծոյ մեծութեան վերայ այն մարդը թոյլ գաղափար (հասկացողութիւն) ունի, ով որ այս երկիրս, որոյ վերայ մեք ապրումենք, ամենայն փառքի ու մեծ վայելչութեան կեդրոնն է համարում, որոյ չորս կողմն են պտտում տիեզերքի ամէն աշխարհներն ու արեգակներն: Բայց շատ սրամիտ ու խոր մտածող քննիչներն գտել են, որ մեր այժմեան բնակութեան տեղն՝ երկնքի տարածութեան մէջ շատ փոքրիկ աստղերի բռնած տեզերից միմն է. որ տիեզերքի մէջ գլուխուած մարմինների մէջ այնպիսիները կան, որ իւրեանց մեծութիւնովն ու լուսովն՝ երկրիցս բոլորովին անհամեմատ կերպով գերազանց են, որ մեք երկրին հետ՝ հզօր թագուհի արեգակի չորս կողմը պտտող երկնային զարդերի զօրութիւնների մէջը նորա մոլորակների միմն ենք միայն:

Ով որ բոլոր աշխարհիս վերայ տեղեկութիւն ունի, հասկանումէ եւ գիտէ, որ այս անսահման տիեզերքի մէջ ամենայն բան յաւիտենական տեւողութիւն ունի, ամենայն բան տեսակ տեսակ ուժերի, կամ՝ զօրութիւնների անծայր, անվերջ մի թագաւորութիւն է միայն: Այս ուժերը միշտ կան, բայց նորանց երեւումներն են փոխվում միայն: Այսպէս եւս մարդիս հոգին եւս մի զօրութիւն է: Նորա առաջ բերած բաները կամ նորա արածները, նորա մտքերը, նորա ցանկութիւնները, նորա վերայ երեւեցած, տեսնուած բաներն անցաւոր են, անց կիենան, կգնան, բայց ինքն՝ իւր ասած խօսքերովն՝ կմնայ: Այսին, որ իրանից ճառագայթներ է արձակում, գորանով չէ նուազում:

Ստեղծուած բաների մէջ մի ուրիշ օրէնք եւս ճանաչումեմ ես թէ, ամեն բան իրա նման բաների մէջ է դարձեալ լուծվում. ջուրը մէգ ու ամպեր է դրկում՝ դէպ ի երկինքը, ու դարձեալ ցած են գալիս, թափվում երկրիս վերայ նոյն մէգն ու ամպերն՝ իրրեւ ցօղ ու անձրեւ: Կենդանին, մարդիս մարմինը, հոգիցն յառաջ եկած լինելով ու երկրի հիւթերով սնուած (կերակրուած), իւր ժամանակին դարձեալ հոգն են իջնում ու հողի մէջ լուծվում:

Ինչպէս որ գիտակցութիւն չունեցող հիւթերը, տեսակ տեսակ միաւորութիւնների մէջ լինելուց յետոյ, կրկին վերադառնում են

Խրանց առաջին ու սկզբնական գերդաստանին, դարձեալ այն նիւթերը դառնալով, ինչ նիւթեր որ էին առաջ. այսպէս եւս գիտակցութիւն ունեցող, բանական էակները (արարածները) Աստուած ճանաչող, Աստուած մտածող հոգիները դարձեալ յետ են դառնում հոգիների այն գերդաստանին, որիցն որ առաջ էին եկել: Աստուծոյ ընդհանուր եւ իշխող պատուիրանին համեմատ, մարդիս մարմինը, մեռնելով, հոգ է դառնում, բայց իմ հոգիս վերեւ է թռչում, գնում իրան յատուկ, իւր բնութեանը համեմատ հայրենիքն: Ընութեան մէջ տարածուած այն ընդհանուր օրէնքը յաւիտեանական կեանքի նշմարանք ու ակնարկութիւն չէ՞ արդեօք մեզ համար որ զգանք ու հասկանանք: Արդեօք լա՞ւ եմ հասկացել:

Արդեօք Քո ասածդ լա՛ւ եմ՝ հասկացել, ո՛վ Փրկիչ, իմ առա-
նաճային լուսաւորիչս. այո՛ լաւ եմ՝ հասկացել. երբ Պու Քո
աչքիդ առաջ եղած մահուանդ համար աշակերտներիդ միտքը
պատրաստումէիր, որ նորանց սրտին ծանր չգայ Քո իրանցից բա-
ժանուիին, ասացիր. «Ելէ Դո—՝ Են՝ «Երէէ՛, ուրախ ելի՛նէէ՛, ոչ ասացե
լէ՛լ Ելէ, Ես Հօրս Ե՛մ Գնո՛մ. որովհետեւ Հայրս Ջե՛ Է, քան Ելէ Ես »:

Ախ, երբ որ ինձ եւս խաղաղութեան հրեշտակն մի օր հոգի մէջ հանգստանալու տանի, լաց մի լինիք, իմ հոգուս կողոններ, որովհետեւ ես եւս այն ժամանակ իմ Հօրս, իմ երկնաւոր Հօրս մօտը կգնամ: Արտասուք մի թափէք իմ անմահ հոգուս հնացած, բոլորովին մաշուած հագուստիս վերայ, որ իմ վրաս էր, որ ինձ ծածկումէր. որովհետեւ ես եւս այն ժամանակը իմ՝ խակահան, յատուկ հայրենիքս, իմ առաջուան գերգաստանիս, երանելի հոգիների գեղեցիկ աշխարհքն յետ գնալու կլինիմ ու կվերագառնամ: Լաց մի լինիք. զո՛ւր եւ անարգար տեղն լաց կլինիք, ինչի որ անիրաւացի կլինի այդ ժամանակն ձեր արտասուք թափելը, ինչպէս որ ես եւս զո՛ւր տեղ, հոգուս մեղք արի ու սիրտս ցաւելով ու չգիմանալով, լաց եղայ ինձանից յառաջ վախճանողների վերայ: Ենչի որ իմ աչքս այն տեղի վերայ էր մնացել. իմ սիրտս այնտեղ էր. իմ կեանքիս ամենաթանկագին բանն այնտեղ է. այնտեղ է այն ամեն բանն, ինչից որ իմ երկնաւոր Հայրս իմ սիրտս այնպէս է կապել, որ երբէք բոկ չգալ: Այնտեղ մեր հայրենիքն է, այնտեղ մեր խոհական ու ճշմարիտ

կեանքն է: Երանի ինձ, որ գիտեմ թէ՛ մահ առա՞ծ բանդ չկայ՝
այլ՝ չօրը ծօրն երբեք միայն:

(Թարգմ.)

Գ. Ե. Ա.

Գ Ի Տ Ն Ա Կ Ա Ն

ԱՍՏՂԱՐԱՇԽԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ.

(Շարունակ. Արարար, գեղ. Բ. Ժ.)

Զ.

ԳԻՍԱՒՈՐԱՅ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ.

Մինչեւ ցարդ մեր ասածներէն զիւրաւ հասկանալի էր թէ՛,
գիտաւորք ամենքն եւս ի միմեանց կտարբերին, թէ մին ամեն մա-
սամբ միւսոյն հետնոյն եւ նման չէ, եւ թէ իւրաքանչիւրն իւր-
եան յատուկ անհատական հանգամանքներն ունի:

Սակայն կարելի է ասել թէ բոլոր գիտաւորաց վերայ մի կեր-
պարան կնշմարուի որ ընդհանուր է ամենուն եւս: Այդ ընդհա-
նուր կերպարանը բաղկացնողը երեք բան է. մին է կորիզը կամ
գլուխը, միւսն է վարսը կամ պսակը, երրորդն է գէսը կամ պո-
չը: Առհասարակ բոլոր գիտաւորք, ինչքան զանազան կամ
տարբեր իսկ լինին միմեանց, անպատճառ այդ ընդհանուր կեր-
պարանքը՝ այն է կորիզը, վարսը եւ գէսը՝ պէտք է ունենան:

Կորիզը կամ գլուխը այն է, ասացինք նախորդ յօդուածոց մէջ,
որ գիտաւորին ամենուն փայլփլուն մասն է: Սա թէպէտ բնական
աչքով իսկ կերեւի, սակայն լաւ հեռագիտակաւ մը նշմարուած
ատեն, գրեթէ բոլոր գիտաւորաց գլխոյի մէջը փայլուն եւ պայ-
ծառ մի կետ կոտնուի: Այդ լուսաւոր կետը կարելի է ասել թէ
նա է ամբողջ գիտաւոր աստղը, դա է բոլոր աստեղ ձգողութեան
կեդրոնը, որ բաղկացած է հաստատուն կամ հեղուկ նիւթերէ,
որ կտանայ ուղղակի լոյսն Արեգակէն եւ կանդրադարձնէ, եւ
որոյ մէջ կը կատարուին բացառապէս բաղկացման եւ լուծման քի-
միական շարժումներու գործողութիւնք: Եւ այս է որ դմա աստ-
ղաբաշխական մի հանգամանք կը նմայի՝ սա բանին համար թէ,